


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ֆրաք 10
վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20

ՍԵՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ֆրաք 12
վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ
20
ՍԵՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի Շարաք օրերը : Ծա-
նոցման տողը 10 Սանդիս : Երու ք/ւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիս :
2 հրահարակուած գումարիւնը եւ յսրուի :

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

Նոր հրահարակուած վիճակագրութենէ
մը հասկցուեր է որ թէ՛ Պուլկարիայէն և
թէ՛ Եգիպտոսէն և Պոլիս վերադարձող ազ-
գայնոց համագումարը 12,400 հոգի է :

—o—

Կեդր. վարչութիւնը թէ՛ լրագրաց
և թէ՛ ամեն կողմէ եղած իրաւացի գիտո-
ղութիւնները ի նկատի առնելով, ասկէ ա-
ռաջ հապճեպով տուած մէկ որոշումը այս
շարժու բարեփոխեց, այն է՝ վարժարանաց
դասագիրքերը միօրինակութեան վերածելու
համար զանոնք Ուսումնական խորհրդոյ քե-
լին չի ձգելով, կարող և փորձ անձերէ
մնայուն յանձնաժողով մը պիտի կազմուի,
(որ Ուսումնական խորհրդէն անկախ պիտի
ըլլայ) անոր կողմէ պատշաճ դատուած դա-
սագիրքերը միայն պիտի տպագրուին :

—o—

Անցած շարժու ի և Պոլիս տեղի ու-
նեցած երկրաշարժը՝ 1894ի երկրաշարժը յի-
շեցուցեր է ժողովրդեան. այն աստիճան
սաստիկ եղեր և երկիւղ ազդեր է :

—o—

Աւստիկ Պաշտօնական Թարգմանութիւն-
ներն այն Ուրաղին, որով Չարը Ս. Ալեքսանդր
Նեւացիի պատուանշանը տուաւ նկարիչ Ա.
Վալովսկիի :

ԲԱՐՁՐԱԳ ՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Մեր իսկական գաղտնի խորհրդական,
կայսերական գեղարուեստից ճեմարանի պատ-
ուաւոր անդամ, Ծովային վարչութեան նը-
կարչի կոչումն վայելող, նկարչութեան պրո-
ֆեսոր Թովհանէս Ալվաղովսկուն :

«Ի վարձատրութիւն վաթսուամեայ
գեղարուեստական դորժուէութեան, որ հա-
րստացրել է ռուս գեղարուեստը ականաւոր
արտադրութիւններով : Ամենազորմածաբար
պարգեւում ենք ձեզ Մեր սուրբ և ուղղա-
հաւատ մեծ իշխան Աղեքսանդր Նեւսկու
կայսերական շքանշանը, որ ընդ սմին առա-
քելով, հրամայում ենք ձեզ կրել ըստ պատ-
կանելոյն : Մնա՛ք Մեր կայսերական ողորմա-
ծութեամբ զէպի ձեզ բարեհաճ :

Իսկականի վրայ Նորին կայսերական Մե
ծաւրեան ձեռնով ստորագրուած է
«ՆԻԿՈԼԱՅ»

26 Սեպտ. 1897

Տարմշդատ :

Չարին մայրը, այրի կայսրուհի Մարիա Գեորգորովնա ալ հետեւալը հեռագրած է մեծանուն արուեստագէտին .

“Շատ զգածուած եմ որ յիշեցիք զիս ձեր ընդարձակ և հիանալի գեղարուեստական գործունէութեան վաթսուեամեայ տարեդարձին օրը : Կ’առաքեմ ձեզ իմ շնորհաւորութիւններս ու սրտագին բարեմաղթութիւններս” :

Տեար Մաղաք Տ. Մինասեան իւր տիկնոջ մահուանն առթիւ բարեհաճած է 30 Փրանք նուիրել տեղւոյս Աղ քատախնամ Ընկերութեան :

Կ. Պոլսէն կը գրեն թէ Տեար Պատրիկ Կիւլպէկեան յանձն առած է իր ատենապետութեամբը Աղբային Հիւանդանոցի համար հոգաբարձութիւն մը կազմել :

Կը լսենք թէ տեղւոյս թաղ Խորհուրդը որոշեր է՝ Եգիպտոսի մէջ ձէթով տղայ մկրտող, Աթենքի մէջ կառուցանելի Մատուռին համար հանգանակած տրախմիները առնող քաղոք ու Վառնայի մէջ հարսնիքի մոմի ֆիթիլներու վրայ խնդիր մը հանելով Հայ ժողովրդեան (Թրքերէն լեզուաւ) նախատալից խօսքեր ընող շնորհունակ Տ. Գեորգ քահանային ըսել. “Առեալ զփիլոնն և զխալւախն երեսի ջուրով կըկալ ևրթիցես ի քաղաքէս” :

Թաղ. Խորհրդոյ սոյն որոշումը — եթէ ստոյգ է — գովեստի արժանի է :

Վերջապէս, հինգշաբթի գիշեր տեղւոյս խաւարակուռն ընթերցարանին սրահը լուս տեսաւ, ու թէև Վարչական ժողովը ՚ի նիստ հրաւիրուած էր, բայց մէկ քանի կարեւոր

անգամոց բացակայութեանը պատճառաւ առանց որոշման մը յանգելու ցրուեցաւ :

Մուծը նորէն կը տիրէ հոն :

— 0 —

Ռուսճուգի Տ. Ղեւոնդ քահանան, որ ինչպէս կը յիշուի, իր վերամուսնանալու խնդրոյն առթիւ հրապարակի վրայ կարգ մը գայթակղեցուցիչ զրոյցներու տեղի տուած էր, ժամանակ մը լռութեան մէջ քննադատ յետոյ, այս օրերս վերստին երեւան կ’ելլէ, այս անգամ աւելի հերոսական գործի մը գլուխ անցած : Միշտ նոյն անուշ երազն է որ կ’որորէ զինքը ու միշտ միեւնոյն ծրագիրն է որ ի գործ դնել կ’ուզէ, արհամարհելով Եկեղեցական սուրբ օրէնքները եւ քահանայապետան նուիրական ուխտ :

Ռուսական քաղաքներէ մին, Խուլա — Օգնա, ուր յիսուն տունի չափ Հայ ընտանիքներ կը գտնուին, վերջերս իր նոր ծրագրի յաջողութեան համար հոն կը հաստատուի ատեն մը, ու տեղւոյն ժողովուրդը կարգ մը շլացուցիչ խօսքերով կը յորդորէ ու կը թելադրէ որ ամուսնանալէն ետքը զիմեն Վահափառին ու պահանջեն թոյլտուութիւն ընել իրեն քահանայագործելու, հակառակ պարագային մէջ սպառնալով կրօնափոխ ըլլալ : Ի՞նչ կըսէք ասոր :

— Ապրիք, տէր հայր, ապրիք : Լուսմտածեր էք այս նոր ծրագիրը. նպատակը կարգաւորացնէ միջոցները, այնպէս չէ :

— 0 —

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ (°)

Անցեալ տարուան գաղթականութեան հոսանքի ժամանակ Պոլսկարիոյ հայաբնակ քաղաքներէ միոյն մէջ կը հաստատուի Պոլսեցի ընտանիք մը, այր ու կին, կնոջ հայրն ու մայրը :

Ասոնց բնակած տունը պարտէզ մը ունէր, որոյ ներսի կողմէն մշտաբաց դուռ մը

յարաբերութեան կը դնէր քովի տունը, ուր կը բնակէր տեղւոյն ամենազգեցիկ ընտանիքներէ մին: Այդ ընտանեաց անդամներէ մէկը որ ազգային կարեւոր պաշտօն մը ունէր, մըշտական յարաբերութիւններ հաստատած էր վերոյիշեալ գաղթական ընտանիքին հետ: Սա իր յաճախակի այցելութիւններով կ'սկսէր տեղի կուտայ գաղթական երիտասարդին, որուն կողակիցը հրապոյրներէ զուրկ չէր: Երիտասարդ ամուսինը կը պահանջէ տունէն դուրս ելնել, ասոր վրայ կինը ու ծնողքը յիշեալ աղբասէր երիտասարդին հետ միացած լաւ մը կը ծեծեն խեղճը ու տունէն դուրս կը նետեն:

Մարդը աղբային իշխանութեան դիմելով իր պատուոյն պաշտպանութիւնը կը պահանջէ, ուր, սեբաղդէն, իր արդար պահանջն մերժուելէ զատ, սպառնալիք ալ կը լայ գինքը կառավարութեան միջոցաւ հեռացնել բաղաւթէն:

Վերոյիշեալ մարդասէր երիտասարդը կ'ուզէ միջամտել ու հաշտեցնել զինքը կընոջն ու ծնողացը հետ, հետեւեալ պայմաններով.

1. Ամուսինը պիտի համբուրէ կնոջը ծնողաց ձեռքը «Մեղայ» ըսելով.
2. Նոյն տունէն չի պիտի փոխադրուի ուրիշ տուն.
3. Իր, այսինքն այդ բարեսիրտ երիտասարդին երթեւեկութեանը մասին խնդիր չի պիտի հանէ եւ գրաւոր կերպով ինքզինքը մեղապարտ պիտի հռչակէ:

Վ.

Ընթերցողին կը թողունք այս մասին պէտք եղած վճիռն արձակել:

Նամակ առ Խմբագրութիւն

... Խմբագիր

Հաճեցէք ներկայս հիւրընկալել, ընդունելով մեր շնորհակալիքը.

Մնամ յարգանք

Վ. Բ.

Առ

Գեր. Ս. Արսէն Ծ. Վ. Վեհուհի.

Կաթողիկոսական այցելու հովիւ Թումանիոյ եւ Պուլկարիոյ:

Գեր. Հայր

Խոնարհաբար Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք. ի Պուլկարիա գաղթող կարգ մը կղերականաց վրայ, սրոնք եկեղեցական կանոնաց հակառակ վարմուղիներով բարեպաշտ ժողովուրդը կը գայթակղեցնեն:

Մատուցանելով համայն Ս. Աջոյդ,

Մնամ Խոնարհաբար

Վ. Բիւշիւքեան

Ձրի Թէյարան

Ուրախութեամբ իմացանք որ տեղւոյն թէ՛ բնիկ եւ թէ՛ գաղթական երիտասարդներէ ընկերութիւն մը կալմուկելով, մօտերս ձրի Թէյարան մը պիտի բայուի, ուր աղբատ գաղթականը առտու իրիկուն մէկ գաւաթ թէյ եւ շերտ մը հաց պիտի կրնայ առնուլ:



Պարապ մարդը (ընկերին անօգուտ) ի զուր բնութեան կենսատու օգը կը շնչէ ու երկրագունդին ծանրութիւն կը պատճառէ:

Հարուստ կծծին ունեւոր յիմար մըն է, իսկ հարուստ շոյալը ունեւոր անխելք մը:

Հասմովութիւնը ամէն տեսակ գէշութիւնը գործել տուող տարերքներէ կազմեալ է:

Թարգմ.

ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԲ Ի Կ. ՊՈԼԻՍ)

ՊԼՈՒԽ Ե.

ՀԱՆԴԻՐ

Համբանան բերուելէն ետքը Աստուծոյ աղային հրամանաւր գարեջուրին գաւաթները նորէն լեցուեցան ու երեքը մեկանց թըռինքէ ըրին :

— Յէփքինդէ՛, բաւաւ սպասուհին :

— Վայ ղէփքըդ սիրիմ, պատասխանեց Աստուծոյ աղայն ու գաւաթը պարպեց :

— Էֆէնտըմ, աս մախլուգաթներուն թիւրքէ խօնըմաները բէք թօփափ եին . մարդուն ֆօքին կու զըտղըտացնին, զաննը կանխ ուր՝ բերներնուն էրքեան մինտէրին (լեզու) պալի տէպպէն խօթեր հաներ եին :

— Էտանկ չըլլին իսէ, մուշթերիները ինտո՞ր ձէլպ տի անին :

— Զաքար Էմիլիյին հետեւջի հեղուն ֆէօս էկինք իսէ, սե չամիչի պէս աշլին տակի խօբախին պըյուլները (թաքթիչ) կէրէկի կիպի էրկան ու կեօլկէլի ակնիկ մի թէստաթի արէնք, պէսպէլլի պէճայիչ է էղեր, էկէր ֆէօս ըլլար իսէ :

— Ի՞նչ տի անէիր :

— Տափուտի մախամ մի ունէր, աղային հըմար մէկ էրկու սախուզ ծամել կուտայանք :

— Էֆէնտըմ, ըստմանքդ ուրվախիթով գեղին ժամուն մէջ հաճի մայհտեսի տիրացիւ ֆիլիկին հետ շարական կու կարգայիր վէ ըսմենուն բերանը բաց կու ձգէիր, հըմայիկս քաղքին խաղերէն գիւն սախուզ մի ծամէ ուր՝ ֆօքիս ֆէրահլանմիչ ըլլի, ղէրէ, անցած օրուան ան սէլվի պոյլի ակնիկնը տեսնելէս սըղրա՝ ակշարքին կնիյները աշքիս չի տի էրեան :

— Զըսի՞ս աղա, ապան ու քէպէն էրեցիր :

— Պէլի :

— Հունլարը տօլտուրթ հանում ախչին :

— Ասբասիա, ֆէռէ ագօմպ տիր պիւրէդ :

— Էֆթաքսէ :

— Նիհայէթիւլ էմր, ան Ըթընպօլցի ակնիկին նուր ձէմալը՝ աս մեղաւորիս ֆօքիին տէօշէմէներին վրայ կրակէ ղիլա մի նախշ արաւ :

— Աման Աստուծոյ աղա, հաստըս չըլլալով կըտիմ ուր՝ չեյիս թէքմիլէն թապլա թէպիմ ըլլիս, էնոնք Ըթընպօլցի եին, տուպսրա կանին, մարդը կու խարին :

— Հէյ չօճուհի հէյ, Էինցին խարելը խօլա՞յ է, բ'իւրիւնիւն է մուսցեր :

— Վախիտէ ըմպէս է ըմմա իհթիյաթը ձեռքէ ձգելու չինք :

— Պույուուում ախար, իցէլիմ, ըսաւ սպասուհին, իր գաւաթը անոնց գաւաթներուն զարնելով :

— Իչէլիմ, ճիկէրդ կերածս, իչէլիմ, պատասխանեց Մաթոս աղայն :

Գաւաթները պարպուելէ ետքը Գրդ անգամ ըլլալով նորէն լեցուեցան :

— Պինտ Էռաջ, աս թէրէս բիրան ծառայականիս աճայիպ մի էրեաց ըմմա՝ կու հայիմ ուր ղիյանսըղ չախըռ քէյֆ մի կանէ մարդս :

— Պէլի :

Վերջապէս, չորրորդ գաւաթները պարպուելէ ետքը երկու ընկերք բաւական գինովցած էին :

Մաթոս աղայն սկսաւ քաղքին երգերէն հետեւեալը երգել քթին տակէն, Աստուծոյ աղայն ճեմ կը բռնէր, իսկ խորամանկ ըսպասուհին անոնց ձայնէն չափազանց զգածեալ կեղծելով, մերթ ընդ մերթ «Ա՛խ, եսա՛ ֆաթոս աղա», կը պուար :

ԵՐԳԸ

Մէտինէ խուրմասի քնթիկդ սիրիմ,
Սե չամիչի պէս աշլինքդ ուտիմ :

Էպիսկոպոս թեմերով մաղերդ հիւսիմ,
 Ղըյմախ կերտանիդ մարգրիտ շարիմ:
 Նաղ ըրէ, նաղըդ վերցնիմ,
 Այէա թօղ շաքար կերցնիմ:

Բաղնից դուռը զարկին պաղըդ,
 Տալտանքդ քաշին նաղըդ:
 Ներուրտանքդ հիւսին մաղըդ,
 Թող հինային քուսան մուստըդ:
 Նաղ ըրէ, Լայն:

Առտուն կելլայ պաղ պաղ հովերը,
 Պիւպիւլ չափ քարկեր վարդին բոլորը:
 Չորս պէնկ քունի լուս երեսին բոլորը,
 Ինծի հարս տըլլի ախշինին աղւորը:
 Նաղ ըրէ, Լայն:

Մաթոս աղայն գարնջուրին աղբեցու-
 թնէն հետզհետէ թուրացած՝ աչքերը կէս
 մը գոց դիրքի մէջ կ'երգէր, իսկ Աստիւրա-
 ղայն լուս մը գինովցած ըլլալէն աչքերը բո-
 լորովին գոցեր էր:

”””

Նոյն միջոցին տեսարանը կը փոխուէր:
 Առջիւնուն սեղանին զարնուած կռու-
 փի ուժգին հարուածի մը աղմուկէն երկու
 ընկերք յուշաբերեցան ու իրենց դէմը տե-
 սան երկայնահասակ հուժկու մարդ մը՝ որ
 “Հոս երգելը արգիւնալ է”, ըսելով 62 դա-
 հեկանի հաշիւ մը կը ներկայացնէր:

Սպասուհիք աներևութացած էին:

Մաթոս աղայն յանկարծակիի եկած,
 վայրկեան մը ապուշ ապուշ մարդուն երեսը
 նայելէն հոգը ինքզինքը ժողուելով պատաս-
 խանեց:

— Էֆէնտըմ, հիսապընըդտա կալաթ
 վար. պիզ սերֆօշ տէկիւլիւք, տէօրտէր գա-
 տէֆ իշտիւք:

— Էվլէթ իշտինիզ, մատմաղէլէ տէ
 իբի շիշէ շամբանեա իշիրտինիզ, օ տա ուղէ
 իգրամ էթտի, սիզ տէ օնա իբրամ էթտի-
 նիզ. իբի բօսսիօն կռապիւր կէլտի, հէփսի
 ալթմըշ իբի զրուշ էթտի:

— Եւ ողորմեա բօ արարածոց, Լ. Ինձ
 բաղմամեղին. տեսա՞ր մի հրմայեկս. կերած
 ապիւրը Էֆէնտըմ, կատու խան տուղան խո-
 յի տօլապիի պէս տէօնիւք հիսապու մի ախ-
 շինին հիսապն ալ: մեր եքրիւնին վրայ զամմ
 կ'անէ:

— Ճիվերդ ի վար, թող ընէ ո՞վ տի
 տայ ուր ո՞վ առնէ:

— Ծօ, ախշինին հիսապընը՝ տա մը
 պիզ վերէճէկիւզ, օ օհնտիսի պիզի սէվտիւ-
 կիւնտէն իգրամ էթտի:

— Սիլի սէվտիկիւնտէ՞ն. . . օ, բանա-
 իամու:

— Օ բանայիրտա՞ մը. հանկը՞ բանա-
 յիրտա:

— Ատէթ պոյլէ, օ իգրամ հաբաժագ,
 մա փարայը սիզ վերէճէք:

— Նի՛չիւն:

— Պոյլէ:

— Վա՛յ կանթավեր, հալէա էսրար կա-
 նի:

— Քեզի բան մի ըսի՞մ ազտ, անգամ մի
 ուր Դանիէլ մարգարէին պէս ծայն ինկանք,
 աս փարան տի տանք, ղերէ հէրիֆին աշկուները
 էճէլ պէշիկիի պէս ֆուրուշ ֆուրուշ կու գառ-
 նան:

— Էֆէնտըմ, ջաքար էմմիին հեա էկանք
 իսէ՛ մարդը աստար փարայէն չելաւ:

— Ինչէ՞ն տի գիննաս, պէլքի քեզի բան
 մի չըսաւ, պինտէն ալէյ հ փարան տո՛ւր դուրս
 իյնինք:

— Աղէկ կըսիս ըմմա՝ մենք չորս չորս խա-
 տէֆ չի խմեցա՞նք մի, շատ շատ 20 սկան փա-
 րայէն 4 զրշ կանէ. մէզէի՞ն ալ փարա տի
 տանք:

— Ո՞վ գիտէ,

— Է՛հ մէճիտիյէին վրան թող բերէ չորս-
 նոցը առնէ:

— Ինծի հարցնես իսէ՛ չորսն ալ շատ է
 ըմմա նէ իսէ, սա պուլաշ ըգ քէթերիղէն աղա-
 տու հլու է:

— Չըսի՞ս սոյղուն տի տանք:

— Հիշ շիւպհէ մ'անիր:

Վերջապէս, կէս ժամուան բանակուիւէ մը ետքը Մաթոս աղայն պարտաւորեցաւ 62 դահեկանը համբել: Ու երբ գարեջրատունէն կը մեկնէին, երեք անգամ սեամին վրայ թքնելով գոչեց. «անգամ մի ալ աս ղը-ժոխք դունէն մտնիմ իսէ՝ ճիվս կոյրի:

— Ամէն. միմուաց Աստիւր աղայն, ինքզինքը շիտակ բռնել ջանալով:

Հինգ վայրկեան վերջը այս երկու ընկերք թիւ թեւի, խոտորնակ քայլերով կամուրջէն կանցնէին. եւ որովհետեւ օրն իրիկուն եղած ու Աստիւր աղայն քայլելու կարողութիւն չունէր, ուստի որոշեց նոյն իրիկունը շոգենաւով երթալ ի Գուրու 2էշմէ:

Հազիւ թէ Իսկիւտար բանող շոգենաւերուն նաւամատոյցը հասեր էին, տոմսակապաճառին մօտը կեցող մէկ քանի մարդոց հարցուցին թէ «Այս շոգենաւը Գուրու 2էշմէ կը հանգպի»:

— Այո՛, պատասխանեցին մէկ բերան, զանոնք ծաղրելու մտօք, վասն զի անոնց գինով վիճակէն չէին կրցած խնդուքնին բռնել:

— Անանկ է նը՝ մունաս քարով, պօճախներդ բաց, օճախը վառեր հէրիֆն ալ կոյներ է. հըմայէկս տի էլլայ, ըսաւ Մաթոս աղայն, ու ընկերը սանդուղէն իջեցնելով յիմնահին յանձնելէն ետքը, ինքը միևնոյն խոտորնակ քայլերով իր բնակած խանին ճամբան բռնեց:

Քանի մը վայրկեանէն շոգենաւը կամուրջէն կը մեկնէր, ու Աստիւր աղայն փոխանակ Գուրու 2էշմէի՝ Իսկիւտար կը տանէր:

(Շար.)



ԱՆ Պ. Մ. Ս. Ի Պուրկազ. — Մինչեւ երբ պիտի սպասենք 10 ֆրանքի համար: Հոգաբարձութեան մը պատիւ չի բերեր այս:

ՈՒՄՈՒՐՅԱԳ (*)

Հեռու բաղաբէս
Հեռու ծնողքէս
Կեցայ միայնակ,
Գիւղն Ումուրֆագ:

Գիւղիս մարդիկներ
Ամբողջ են թիւրքեր,
Գլուխնին աւառք,
Ոտքերնին յառք:

Հագնին էնքաւի,
Կը կապեն գօտի.
Խօսին թուրքերէն,
Տարբեր մերիկէն:

Տեղերնին պառկած՝
Մացառէ շինուած.
Յարդէ է վըրան,
Չունի պառուհան:

Հիւղերն համայն,
Են ղերթ գերեզման.
Հողէ է գետին,
Նոյնպէս պատերնին:

Կիներն ամեն՝
Սեւ յարշաւ կառնեն,
Գլխէն վար բաշած՝
Մարմինն է պատած:

Չունին ոտքերնին
Գուլպա, որ հագնին.
Կարմիր եմէմէնին
Պահեն ձմեռին:

Թէրիկ մարդ տեսնեն՝
Դեմքերնին ծածկեն,
Ետեւնին դառնան
Կուտան պատասխան:

Հարկ չէ նկարել
Տղոց կեանք պատմել,
Բոկ է ոտքերնին,
Նոյնպէս մարմիննին:

Արշաւուրաճագ

(*) Պուրկարիոյ թրքաբնակ գիւղերէն մին, որ ամեն կերպով նմոյշ էմէ փացեալ ամբողջ թրքաբնակ գիւղերուն:

Հինգշաբթի օրը փչող սաստիկ քամիին միջոցին՝ մարդ մը կրկնոցին մէջ փաթթուած՝ Մուսալլայի մեծ պողոտայէն կանցնէր. անծանօթ մը ապոր գէմը ելլելով հարցուց. «Պարո՞ն, ժամը քանին է»:

— Ատոր պատասխանը Յունիսին կրնայ տրուիլ, ըսաւ՝ ու ճամբան շարունակեց:



ԱՍԼԸ ԵՕԳ

Առաւ—փախաւորք տիւնեատան քաղա-
մը տէյօրլար . — Ասլը եօգ :

Պու սէնէ պիր արապա օտուէն 30 ղու-
քուշա սաթըլաճաք ըմըլ . — Ասլը եօգ :

Կէճէլի կիւնաիւզլիւ պիր գըլ մէթէպի
աշըլաճաքմըլ . — Ասլը եօգ :

Տօլան չօճուգ պիլէ «Պէն աղգասէր իմ»
տէյօր ըմըլ . — Ասլը եօգ :


Աղքատախնամ օտուէն իշիւն հանգա-
նակութիւնա չըգաճաք ըմըլ . — Ասլը եօգ :

Մէնտիլ վէ եախօտ սու գատէհլէրի
իլէ թօրլանան րարալարըն քեաֆֆէսի ֆու-
գարալար իշիւն իմիշ . — Ասլը եօգ :

Գուրու գահվէճիլէրին սաթըլարը
գահէի հալիս իմիշ . — Հէլէ պունուէն հիշ
Ասլը եօգ :

ԳՈՐԾԱԽՈՐԱՅ ՀԱՄԱՐ

Կ'ուզէք աժան ճաշ մը ընել , դիմեցէք
հօթէլ Տօպրիշ , Գրիգոր Բիւշիւքեանի ճաշա-
րանը , համադամ կերակուրներ պիտի գտնէք
գործաւորի քսակին յարմար :



ՀԻՇՆ ՈՒ ԴՐԱՄԸ

Առանց ձեռք դպցնելու , ֆրանքնոցը
պիտի կրնանք շիշին մէջ դնել , հետեւեալ
կերպով :

Բերնէն մէկ ֆրանքնոց մը սղմելու աս-
տիճան լայնութիւն ունեցող ջուրի պարապ
շիշ մը կը դնենք սեղանին վրայ , նոյն շիշին
բերանը պիտի դնենք խաղի թուղթ մը կամ
այցեատուս մը և անոր մէջ տեղն ալ ֆրանք

մը : Արդ , բուժամատին ծայրը միջնամատին
ծայրին հպած՝ հարուած մը կուտանք թուղ-
թին , (այսինքն պօնդ , ֆիսկէ) :

Այս հարուածէն թուղթը մէկ կողմ պիտի թռի
(տե՛ս պատկեր) իսկ ֆրանքը շիշին մէջ պիտի
իյնայ « Թընկ » ձայն մը հանելով :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 27

Չորս եղբայր են անբաժան ,

Դիմեն զուգահեւական .

Բայց չի մոռնանք , որք չունին ,

Թէեւ անխոնջ աշխատին :

Իրենցմէ մին երբ մեռնի ,

Երեքին արժէք կ'որսուի :

— 0 —

Թիւ 26 հանելուկն էր ՓԱՅՏ :

Գ. Գարիպեան

Լուծումն Բառահանելուկի

Մեղրով ճանճորսութիւն եւ յեղափո-
խական շարլաղանութիւն :

Ե. Պալեան :

Հաոցէնիդ իմացուցէք որ պարզեւնիդ ղրկենք :



ԿԱԼՎԱՆԻՍԹ

Ամեն տեսակ

տպագրական կա-

ղապարներ պատրաստող , նաեւ

անձնական և թէ՛ առևտրական կնիքներ :

Սոյն կնիքները որ ըստ վերջին ղրութեան
պիլինձէ կը շինուին , հրապարակի վրայ երե-

ցած քառուղէ կնիքներէ աւելի գիմացկուն են
և գիւրութեամբ կը տպագրուին . գինն ալ

քառուղի գինէն տարբերութիւն չունի : Բա-

ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով

կը կատարուին : Դիմել ի վառնա Չիլինկիր-

լէր փողոց թիւ 561 : Գին գոհացուցիչ :



Ա Ձ Դ

ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵԱՆ

նսկերիչ - փորագրիչ



Ոսկի, արծաթ և ուրիշ ամեն տեսակ մետաղէ տուփերու, ժամացոյցներու, բօրովէններու և մատանիներու թէ վրան և

թէ մէջը Կօնէկրաւ և Անսրլասէ մարգանքեր ու գիրեր փորագրող, ամեն լեզուէ թէ անձնական և թէ վաճառականական կրօնքներ պատրաստող, նաև ոսկերչութեան վերաբերեալ ամեն տեսակ գործեր կը շինէ: Դիմել ի Վառնա, Ուլիցա Թուրանցբա Տիւար Տիգրան Գալֆանանի խանութը, թիւ 310:

Տ Պ Ա Ր Ա Ն



ՀԱՆԴԷՍԻ

Այցեատման, հասցէտման. նամակագրութիւն, հրաւիրատման, բարենիշ, տոմարակ, ևայլն ևայլն թէ՛ պարզ և թէ՛ ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը աւարկուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խմբագրութեան:

Վաչրկենական Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և անոր տուփին մէջ կը գտնուի Այցեատման գոր-

ծածուցեան հրահանգը պարունակող տետրակ մը, որուն կողքին վրայ այցեատման տիրոջ անունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանգիմր յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Գոլկարական 5, 10 եւ 15 սանգիմնոց նամակագրօջմ կ'ընդունուի: Կանխիկ:


ՄԵՔԵՆԱՅԻՅ ԳՈՐԾԱՐԱՆ

և Յուդաւան (ՊՈՒԼԵՊԻՔ)

Դ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆԶՈՒԳ

Վառնա Ծրդ թաւ ելլող Թապիս

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և նորոգութիւն, ջաղաքի թէ՛ շոգիով և թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շոգեմակոյցներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթայ գործիքներ, դրամական գումաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ ևայլն ևայլն կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն:



ԳՈՒՀԼԿ

Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի

Կամ Զուարճալի Բաղդացոյց Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով, գիմել մեր խմբագրութեան:

Отговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печатница «Взаимность» — Варна.